

## Հայաստանի և Բուլղարիայի գիտությունների ակադեմիաների նախագահները ստորագրել են փոխըմբռնման հուշագիր



Սույն թվականի մարտի 14-ին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը և Բուլղարիայի Հանրապետության գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Յուլիան Ռեպակին ստորագրել են փոխըմբռնման հուշագիր: Այն ստորագրվել է ՀՀ ԳԱԱ նախագահի՝ Բուլղարիա կատարած պաշտոնական այցի շրջանակներում:

Նախատեսվում է գիտականների փոխանակում, գիտաժողովների, կոնգրեսների, սեմինարների և աշխատաժողովների կազմակերպում, տեղեկատվության և հրապարակումների փոխանակում, համատեղ միջոցառումների կազմակերպում՝ ուղղված գիտության դերի մասին հասարակական կարծիքի ամրապնդմանը:

Երկու երկրների ակադեմիա-

ները կհամագործակցեն հետևյալ գիտական ուղղություններով.

- մաթեմատիկա, համակարգչային գիտություն և ճարտարագիտություն
- մոլեկուլային և ատոմային տեխնոլոգիաներ
- կյանքի որակ և կենսատեխնոլոգիա
- կենսառեսուրսներ և էկոլոգիա
- կլիմայի փոփոխություն, վտանգավոր երևույթներ և բնական ռեսուրսներ
- աստղագիտություն, տիեզերական հետազոտություն և տեխնոլոգիա
- պատմամշակութային ժառանգություն և ազգային ինքնություն
- մարդ և հասարակություն: «Վստահ եմ մեր ակադեմիաների համատեղ հետազոտությունների հաջողության հարցում», - ստորագրման արարո-

ղության ժամանակ ասել է Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի նախագահ Յուլիան Ռեպակին: ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սադյանը կարևորել է երկու երկրների ակադեմիաների համագործակցությունը և առաջարկել այն սկսել մոլեկուլային կենսաբանության և մանրէաբանության բնագավառում հետազոտություններով:

Հուշագրի ստորագրման արարողությանը մասնակցել են Բուլղարիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Եղիզարյանը, դեսպանատան երրորդ քարտուղար Մելին Գրիգորյանը, Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի փոխնախագահ, թղթակից անդամ Ստեֆան Հաջիտոդորովը, Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Եվդոկիա Փաշևան և Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի գլխավոր քարտուղար, պրոֆեսոր Նելի Կոսևան:

ՀՀ ԳԱԱ նախագահն այցելել է Բուլղարիայի գիտությունների ակադեմիայի մանրէաբանության ինստիտուտ, Ռոուլմեն Ցանևի անվան մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ և Կենսաֆիզիկայի և կենսաբժշկական ինժեներիայի ինստիտուտ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## Արցախի օր Բյուրականում



Ս/թ. մարտի 5-ին ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում Արցախի օր էր: Աստղադիտարանն իր շուրջն էր համախմբել տարբեր ոլորտների ներկայացուցիչ արցախցի մեր հայրենակիցներին, մասնավորապես գիտության և մշակութային գործիչներին:

Համաձայն օրակարգի՝ միջոցառման մեկնարկը տրվեց հանդիպում-քննարկումով, որի ընթացքում ելույթներով հանդես եկան աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սա-

յանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանը, ԱՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, բանաստեղծ Սոկրատ Խանյանը և ԱՀ ԿԳՄՍ նախկին նախարար Լուսինե Ղարախանյանը: Մասնավորապես քննարկվեց Արցախի գիտական և պատմամշակութային ժառանգության պատշաճ մակարդակով պահպանության հարցը:

Միջոցառման մասնակիցների թվում էին նաև ՀՀ ԳԱԱ նախագահության գլխավոր խորհրդական Ռադիկ Մարտիրոսյանը, բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները, Աժ նախկին նախագահ

Արթուր Թովմասյանը, ԱՀ ԿԳՄՍ նախկին փոխնախարար Միքայել Համբարձումյանը, Արցախի գիտական կենտրոնի տնօրեն Անյուտա Սարգսյանը և փոխտնօրեն Արևիկ Իսրայելյանը, Արցախի պետական համալսարանի նախկին ռեկտոր Ստեփան Դադայանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայանը, Արցախի պատմության թանգարանի տնօրեն, գիտ. վաստ. գործիչ Մելանյա Բալայանը, ֆիզմաթ գիտ. թեկնածու Կարեն Արամյանը, գիտ. դոկտոր Վահրամ Հայրապետյանը, ԱՊՀ պրոռեկտորներ Վիտյա Յարամիշյանը և Գեորգի Սահակյանը, ԱՊՀ բնագիտական ֆակուլտետի ղեկան Վոլոդյա Միրզոյանը և ուրիշներ:

Հանդիպումից հետո հյուրերի համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ դեպի Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարան և խոշորագույն 2,6 մ հայելու տրամագծով աստղադիտակ, որտեղ ներկայացվեց աստղադիտարանի և Վիկտոր Համբարձումյանի գործունեությունը:

**ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան**



## «ՖԻԼՆԿՈՖՈՆԻԱ-2024»

Սույն թվականի մարտի 21-ին «Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակներում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության միստերի դահլիճում կայացավ «Ֆրանսալեզու տպագիր ժառանգության ոսկե ֆոնդը (17-18-րդ դարեր)» խորագրով միջոցառումը: Այն կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Շվեյցարիայի, Կանադայի, Սերբիայի դեսպանները, ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Դանիել Դանիելյանը, Ֆրանսիայի դեսպանության մշակույթի և համագործակցության բաժնի խորհրդականի տեղակալ և կրթության հարցերով կցորդը, պետական պաշտոնյաներ, ՀՀ գիտական, կրթական և մշակութային կառույցների ղեկավարներ, գրողներ, թարգմանիչներ և այլք:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, ՀՀ ԱԳՆ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և բազմակողմ կրթամշակութային համագործակցության բաժնի վարիչ Տիգրան Բաղդասարյանը, Հայաստանում հավատարմագրված ֆրանկոֆոն պետությունների դեսպանների խմբի նախագահ, ՀՀ-ում Շվեյցարիայի արտակարգ և լիազոր դեսպան Լուկաս Ռոզենկրանցը:

Շնորհակալագրեր հանձնվեցին թարգմանիչներ Նվարդ Վարդանյանին, Գրիգոր Ջանիկյանին, Սամվել Գասպարյանին, Հենրիկ Բախ-



չինյանին, Նազենի Ղարիբյանին, ովքեր մեծ ներդրում ունեն ֆրանսալեզու գրականության տարածման, հանրառաջական գործում, և որոնց թարգմանություններն ընդգրկված են գրադարանի կողմից համակարգվող «Թարգմանաչափ արվեստ» էլեկտրոնային շտեմարանում:

Միջոցառման ընթացքում երաժշտագետ-միջնադարագետ, արվեստագիտության թեկնածու, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող Գայանե Ամիրադյանը «Կոմիտաս վարդապետը և ֆրանսիական մշակույթը» զեկույցով ներկայացրեց մեծ երգահանի և ֆրանսիական մշակույթի կապը:

Կոմիտաս-Ասլանազյան մանրանվագներով հանդես եկավ Կոմիտասի անվան ազգային քառյակը, որի հիմնադրման 100-ամյակը լրանում է այս տարի:

Միջոցառումը եզրափակվեց արժեքավոր ցուցադրությամբ: Առաջին անգամ հանրությանը ներկայացվեց գրադարանի ոսկե ֆոնդում պահվող ֆրանսերեն հնատիպ տպագիր ժառանգության մի մասը, գրքեր, որոնք տպագրվել են եվրոպական տարբեր երկրներում 17-18-րդ դարերում:

**Նելլի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի  
գիտական քարտուղար**

## «Չընդհատված ծածկագիր. հայեր»

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Գիտությունն այսօր» սեմինարների շարքը, որը նախաձեռնել է ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքը՝ երիտասարդների շրջանում գիտության հանրայնացման նպատակով:

Սեմինարների մեկնարկը մեծ հետաքրքրություն առաջացրեց Երևանի և մարզերի դպրոցականների և ուսանողների շրջանում: ՀՀ ԿԳՄՍ նախարարության իրա-



զեկման շնորհիվ «Չընդհատված ծածկագիր. հայեր» վավերագրական գիտահանրամատչելի ֆիլմի ցուցադրությանն ու քննարկմանը մասնակցեց ավելի քան 300 երիտասարդ:


«Չընդհատված ծածկագիր. հայեր» ֆիլմում ներկայացվում են հայոց ծագումնաբանության վարկածների գենետիկական ստուգման արդյունքները, գիտականորեն ապացուցվում է հայերի գենետիկական անընդհատությունը: Ֆիլմում հանդես են գալիս գիտնականներ

Հայաստանից և արտերկրից. ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ Ռուբեն Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էվոլյուցիոն գենոմիկայի լաբորատորիայի վարիչ Լևոն Եպիսկոպյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը, Քեմբրիջի համալսարանի գենետիկ Անդրեա Մանիկան և Տարտուի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Վիլեմսը:

«Ամեն ժողովուրդ ունի այն գենոֆոնդը, որը նա վատակել է իր պատմության ընթացքում: Մարդու գենետիկական սերտորեն կապված է այն պայմանների հետ, որոնք մեզ շրջապատում են: Մեր ստացված տվյալներն օբյեկտիվ են, նորություն են մեր գենոֆոնդը գնահատելու համար և հաստատված են միջազգային հանրության կողմից»,- ասաց Ռուբեն Հարությունյանը:

«Մենք ունենք հստակ ապացույցներ, որ հայերը բնիկ են այս տարածաշրջանում: Մենք ապացուցել ենք, որ առնվազն 8000 տարվա ընթացքում մեր գենոֆոնդն էական փոփոխությունների չի ենթարկվել: Մեր գենոֆոնդի ուսումնասիրությունները թույլ կտան նաև պարզաբանել շատ հարցեր՝ կապված հատկությունների, մուտացիաների, էվոլյուցիոն նշանակության հետ»,- ասաց Լևոն Եպիսկոպյանը:

«Եթե մենք համեմատենք հնագիտությունը և գենետիկան, հնագիտությունը հետազոտում է փոփոխական, իսկ գենետիկան՝ անփոփոխ: Տարիների ընթացքում, երբ մենք ապրում ենք որևիցե տարածքում, այդ տարած-



քի նկատմամբ զգացմունքներ, ուղեմիջներ են առաջանում, այդ տարածքը սկսում է շնչել, կապվածություն է առաջանում, որն ընկած է ինքնության հիմքում: Այստեղ գենետիկան գալիս է օգնության հնագիտությանը, և այդ երկխոսության արդյունքում շատ լուրջ արդյունքներ են ստացվում»,- ասաց Արսեն Բոբոխյանը:

Հանդիպման ժամանակ ծավալվեց հարցուպատասխան: Դպրոցականներն ու ուսանողներն ակտիվորեն մասնակցեցին քննարկմանը՝ մասնագետներին ուղղելով բազմակողմանի հարցեր, հանդես գալով ելույթներով՝ սկսած հայերի ծագումնաբանության հարցերից մինչև գենետիկական առանձնահատկությունները:

2024 թ. ընթացքում ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքը կանցկացնի առնվազն 8 հանդիպում, որոնց մասին տեղեկատվությունը նախապես հասանելի կլինի ՀՀ ԳԱԱ կայքում և սոցիալական ցանցերում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Ջոն Կարապետյանը



Ս/թ. փետրվարի 28-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը ՀՀ ԳԱԱ Արմենակ Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրեց Ջոն Կարապետյանին:

Ջոն Կարապետյանը ծնվել է 1982 թվականին Գյումրի քաղաքում: 1999-2004 թթ. սովորել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում՝ Արդյունաբերական և քաղաքացիական շինարարության ֆակուլտետում:

2010 թ. նա պաշտոնավել է «Գրունտների տատանումների քանակական պարամետրերի համեմատական գնահատումը ուժեղ երկրաշարժերի ժամանակ» թեմայովատենախոսությունը և ստացել երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ջոն Կարապետյանը 2004 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ Արմենակ Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում՝ որպես ասպիրանտ, այնուհետև գիտաշխատող, գիտական քարտուղարի օգնական, Կառույցների սեյսմակայունության և շինարարական կոնստրուկցիաների լաբորատորիայի վարիչ, 2013 թվականից ինստիտուտի գիտական խորհրդի նախագահին է և ինստիտուտի տնօրենը:

Նրա գիտական գործունեության ոլորտը ներառում է երկրաշարժագիտություն, երկրաֆիզիկա, ինժեներային սեյսմաբանություն, երկրաֆիզիկական սարքաշինություն:

2019 թվականից նա նաև «Երկրաշարժերի մշտադիտարկում և մոդելավորում» հայ-չինական միջազգային լաբորատորիայի համադեկավարն է, 2020 թվականից՝ Ինժեներային սեյսմաբանության, սեյսմիկ ազդեցությունների վերլուծության և սեյսմիկ վտանգի գնահատման լաբորատորիայի վարիչը, 2021 թվականից՝ «Մաթեմատիկական երկրաֆիզիկա և գեոինֆորմատիկա» մեկնարկային լաբորատորիայի գիտական ղեկավարն է:

Ջոն Կարապետյանը 55 գիտական աշխատություններ

րի հեղինակ է, որոնք տպագրվել են բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում:

Իր ելույթում Ջոն Կարապետյանը ներկայացրեց իրականացված գիտական աշխատանքները՝ կապված բարձրահարկ շենքերի տարածքների սեյսմահետախուզական աշխատանքների, ջրամբարների պատվարների, ճոպանուղիների, սողանքավտանգ տարածքների ճարտարագիտաերկրաֆիզիկական, սեյսմիկ պայմանների ուսումնասիրությունների հետ:

ՀՀ ԳԱԱ Արմենակ Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի ջանքերով ՀՀ-ում հիմնադրվել են տարածաշրջանում եզակի երկրի մագնիսական դաշտի INTERMAGNET ստանդարտի դիտակայան, առաջին դասի երկրադինամիկական (GNSS) կայանների ցանց, ՀՀ համալիր սեյսմոերկրադինամիկական կայանների ցանց, սեյսմահետախուզական, էլեկտրահետախուզական, մագնիսահետախուզական, գրավիտատիոնական կայաններ:

Ինստիտուտի գիտաարտադրական բազայում ստեղծվել է մոր գիտաարտադրական գիծ, ինչի արդյունքում կազմակերպվել են սեյսմիկ, ջրի մակարդակի ստուգիչ-չափիչ ստացիոնար և մոբիլ սարքերի սերիական արտադրություններ, որոնք հաջողությամբ կիրառվում են ՀՀ հատուկ նշանակության ջրամբարների պատվարների, բարձրահարկ շենքերի տեխնիկական վիճակի գնահատման նպատակով:

2022 թվականից Ջոն Կարապետյանը դասավանդում է Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանում, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում և Շիրակի Միքայել Նալբանդյանի անվան պետական համալսարանում:

Ջոն Կարապետյանն անդամակցում է Ամերիկյան երկրաֆիզիկական միությանը, Ասիական սեյսմաբանական համագումարին, Russian Journal of Earth Sciences (Q3) տեղեկագրի խմբագրական կոլեգիային:

2011, 2013 և 2023 թթ. ճանաչվել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակաբաշխության դափնեկիր, 2013 թվականին ստացել է ՀՀ Սփյուռքի նախարարության պատվավոր դիպլոմ, 2017 թվականին պարգևատրվել է ՀՀ նախագահի շնորհակալագրով «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» կայացման և երիտասարդության շրջանում գիտության խթանման գործում ունեցած ավանդի համար, 2023 թ.՝ ՀՀ ԳԱԱ հուշամեդալով:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտաշխատողների նոր բացահայտումը

ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտաշխատողները կենդանական մոդելներում բացահայտել են Գալանտամինի նյարդապաշտպան ազդեցությունն առանձին նեյրոնների դինամիկ ակտիվության նկատմամբ դիաբետիկ դեմենցիայի պայմաններում: Գալանտամինը (Nivaline, Sopharma, Bulgaria) դեղամիջոց է, որն օգտագործվում է Ալցհայմերի հիվանդության և մի շարք ուրիշ հիվանդությունների դեպքում, ինչպեսզ են մկանային դիստրոֆիան, մկրիտը, պոլիմիոկլոն, ռադիկուլիտը, ուղեղային արյան շրջանառության խախտումները:


«Ստացված տվյալներն ընդլայնել են Գալանտամինի թերապևտիկ թիրախները»,- ասաց գիտական խմբի ղեկավար, ինստիտուտի Նյարդաբանության փոխհարաբերություններ լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր Վերգինե Զավուշյան-Պապյանը: Նա նշեց, որ վերջին տասնամյակում աճել է շաքարախտով հիվանդների թիվը, ովքեր միաժամանակ ունեն սիրտ-անոթային և հիշողության հետ կապված խնդիրներ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության վերջին ուղեցույցները խորհուրդ են տալիս նվազեցնել շաքարի օրական ընդունման կալորիաները, իսկ վերջին գիտական զեկույցներում ֆուրկտոզը նշվում է որպես 2-րդ տիպի շաքարախտի զարգացման ռիսկի հիմնական դերակատար:

Հետազոտության արդյունքները հրապարակվել են «Metab Brain Dis» ամսագրում:

Հետազոտությունն իրականացվել է ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**





ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը գործարկել է Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում (<https://monumentwatch.org/>) եռալեզու (հայերեն, անգլերեն և ռուսերեն) ակադեմիական հարթակը: Այն աշխարհին է ներկայացնում Արցախի մշակութային ժառանգությունը, հետևում դրա արդի վիճակին, արձագանքում արդեն ջանքեր անված ծառայողների: Տվյալների հավաքմամբ և մշակմամբ զբաղվում են ինստիտուտում ստեղծված «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում» խումբը և «Մոնումենտ վոչ» թիմը:

Հարթակի հիմնական նպատակն Ադրբեջանին անցած Արցախի անշարժ մշակութային ժառանգության, թանգարանների, մշակութային օջախների քարտեզագրումը և գույքագրումն է՝ վիճակը մինչև պատերազմը, ընթացիկ վիճակին հետևելը և փոփոխությունների վավերացումը (ավերում, ձևափոխում, վերօգտագործում, քանդակների, պատկերների, արձանագրությունների ջնջում ու փոփոխում, նոր սիմվոլների կիրառում և այլն) և այդ ամենը միջազգային գիտական ու մշակութապահպան հանրությանը ներկայացնելը:


«Հարթակը հատուկ ձևաչափով մշակված գիտական հոդվածների տեսքով ներկայացնում է Արցախի մշակու-

## ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը գործարկել է հարթակ, որում ներկայացվում է Արցախի մշակութային ժառանգությունը

թային ժառանգությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ հնավայրերը, հուշարձանները, կոթողները, քաղաքացիական կառույցները, թանգարանները, հավաքածուները, առանձին մանրամասները: Ահագանգերի բաժնի հոդվածները ներկայացնում են Ադրբեջանի բռնադատության քաղաքականությունը և կոնկրետ դեպքերը, զննատուրն դրանք միջազգային մշակութապահպան կոնվենցիաների լույսի ներքո», - ասաց գիտական խմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը:

Նա նշեց, որ բացի հարթակից, «Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն» խմբի և «Մոնումենտ վոչ» թիմի հետազոտությունները տպագրվել են միջազգային ճանաչում գտած հանդեսներում և ծեռնարկներում (Electrum, Patrimoines, Gruyter, Brill):

«Մշակութային ժառանգության հետազոտության, ահագանգման և պահպանության ասպարեզում թիմի հետազոտական աշխատանքը հիմնվում է միջազգային կոնվենցիաների, տեսական ու մեթոդաբանական մոտեցումների և պրակտիկաների վրա: Դրանք հայաստանյան իրականության մեջ նորարարական են, հավասարակշռված և անկողմնակալ, ինչն էլ պայմանավորում է արդյունքների օգտագործելիության բարձր մակարդակը: Թիմը համապատասխան տեսական, գործնական և տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում ՀՀ անվտանգության խորհրդին, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, ՀՀ Առաքելական եկեղեցուն», - ասաց պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը: Ըստ նրա՝ միջազգային և հայաստանյան մշակութապահպան կառույցները, լրատվամիջոցները հաճախ են օգտագործում «Մոնումենտ վոչի» նյութերը՝ որպես չեզոք գիտական արդյունք և իրավիճակների անկողմնակալ փաստագրում: «Արդյունքները ներկայացվել են Եվրախորհուրդ, Երևանում Եվրոպական խորհրդի գրասենյակ, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատուն: Թիմը համագործակցում է աս-



պարեզի մի շարք կազմակերպությունների և խմբերի՝ Caucasus Heritage Watch-ի, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի, Save Armenian Monuments-ի հետ», - ասաց պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը:

Հարթակի ստեղծմանն աջակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Ֆորդի հիմնադրամը, Գյուլբենկյան հիմնադրամը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը, անհատ հովանավորներ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ԳԻՏԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՕՐԲԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

մաներենով, իտալերենով գրքեր, որոնցից շատերի վրա կան Օրբելիների կողմից արված նշումներ: Այստեղ են պահվում նաև նրանց կողմից հրատարակված աշխատությունները:

Հաճախակի կազմակերպվող ցուցահանդեսների, բազմաբնույթ միջոցառումների շնորհիվ մեծացել է թանգարանի նկատմամբ այցելուների հետաքրքրությունը, ինչը նպաստում է նաև այցելուների թվաքանակի աճին:

2024 թ. մարտի 20-ին լրացավ հնագետ, արևելագետ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 137-ամյակը: Մեծ գիտնականը հետաքրքիր ու իրադարձություններով հարուստ կյանք է ունեցել, նախածնունդից իրականացրել մշակութային կարևոր ու մեծամասշտաբ միջոցառումներ, հեղինակել հայագիտական մնայուն աշխատություններ: Օրբելի եղբայրների տուն-թանգարանում մեծ շուքով նշվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելու

վոր արևելագետ, Էրմիտաժի տնօրեն, Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին նախագահ Հովսեփ Օրբելու բացառիկ վառ անհատականությունը, նրա գիտական անձինքը վաստակը: Ձեկունցումները վերաբերում էին Օրբելու ամենալայն գիտական հետաքրքրություններին, որոնք ներառում էին ուրարտական տարեգրությունները, հայկական ժողովրդական էպոսը և միջնադարյան առակները, հայկական ճարտարապետությունը, Սասանյան թագավորության մշակույթը, համաշխարհային արվեստի գլոբալիզացիայի փրկությունը և այլ հարցեր:

Կոնֆերանսի շրջանակներում ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտութ-



յան դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկավար, պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Հայկ Հակոբյանը, Օրբելի եղբայրների տուն-թանգարանի տնօրենի պարտականությունները կատարող Մարիամ Օհանյանը, թանգարանի հիմնադիր տնօրեն, ավագ գիտաշխատող Գերասիմ Մկրտչյանը: Միջոցառմանը ներկա էին նաև ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր Նաիրա Այվազյանը, ՀՀ ԿԳՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտորի պարտականությունները կատարող



ծննդյան տարեդարձը, չնայած նրան, որ այն հորելյանական չէր:

Տուն-թանգարանում կազմակերպվեց գիտական կոնֆերանս, որին ներկա էին ՀՀ գիտահետազոտական կենտրոնների, թանգարանի հետ համագործակցող տարբեր կառույցների ղեկավարներ և ներկայացուցիչներ:

Գիտական կոնֆերանսի նպատակը մեծանուն գիտնականի հիշատակին հարգանքի տուրք մատուցելն էր, քննարկելը վերջինիս գիտական գործունեության այն բնագավառները, որոնք հանրության շրջանում քիչ են հայտնի:

Կոնֆերանսի շրջանակներում ներկայացվեց ականա-

յան դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկավար, պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Հայկ Հակոբյանը, Օրբելի եղբայրների տուն-թանգարանի տնօրենի պարտականությունները կատարող Մարիամ Օհանյանը, թանգարանի հիմնադիր տնօրեն, ավագ գիտաշխատող Գերասիմ Մկրտչյանը: Միջոցառմանը ներկա էին նաև ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր Նաիրա Այվազյանը, ՀՀ ԿԳՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտորի պարտականությունները կատարող

**Մարիամ ՕՅԱՆՅԱՆ**  
**Օրբելի եղբայրների տուն-թանգարանի տնօրենի պարտականությունները կատարող**



Լրացավ 33 զԱԱ հիմնարար գիտական գործարարի գիտական ղեկավար, տեխնիկական գիտությունների թեկնածու, գրադարանային գործի երախտավոր Տիգրան Կարոյի Զարգարյանի ծննդյան 70-ամյակը:

Տիգրան Զարգարյանը ծնվել է 1954 թ. փետրվարի 25-ին Երևանում: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի ճարտարագիտական համալսարանում: Մասնագիտացել է գրադարանների, արխիվների թվայնացման, կառավարման ոլորտում: 1994-1996 թթ. աշխատել է հանրապետական գիտաթժշկական գրադարանում:

Ներ, նոր ծրագրային փաթեթներ, որոնք հենց նրա շնորհիվ համակարգային փոփոխություններ մտցրին գրադարանային ոլորտում: 2011 թ. բեկումնային դարձավ Տիգրան Զարգարյանի կյանքում. նա ստանձնեց Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի պաշտոնը: Միավորելով Հայաստանի ազգային և Հիմնարար գիտական գրադարանների ուժերը՝ նա կարողացավ ստեղծել թվային շտեմարանների մի մեծ պահոց, համակարգել Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակը, մեկ ընդհանուր գաղափարի ներքո կենտրոնացնել ոչ միայն



գրատպության պատմական ուղին ամփոփ ներկայացնելու համար:

Տիգրան Զարգարյանի նախածնությունը մեկնարկեցին Հայկական գրադարանների միջազգային համաժողովներում:

Ավելի ուշ՝ 2018 թվականից, սկսվեցին Համահայկական թվանշային գրադարանի ստեղծման աշխատանքները, ընդլայնվեցին թվայնացման ծավալն ու աշխարհագրական շրջանակը: Աշխարհով մեկ սփռված հայերեն գրքերի ու պարբերականների երկարաժամկետ պահպանությունը դարձավ առաջնային թվանշային գրադարանի ձևավորման ճանապարհին: 2021-2022 թթ. եղել է նաև «Վիքիմեդիա Հայաստան» խորհրդի նախագահը:

Այսօր Տիգրան Զարգարյանը Հիմնարար գիտական գրադարանի գիտական ղեկավարն է, Հայ գրադարանավարների և արխիվագետների միջազգային ասոցիացիայի գործադիր խորհրդի հիմնադիր անդամներից մեկը, մի քանի տասնյակ հրապարակումների հեղինակ:

Տարիների տքնաջան աշխատանքն անկատ չի անցել: Դրա վառ վկայությունն են բազմաթիվ շնորհակալագրերը, պատվոգրերը, մրցանակներն ու մեդալները:

**33 զԱԱ հիմնարար գիտական գրադարան**

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱՆՏԱՎՈՐԸ

րանում՝ որպես ավտոմատացման բաժնի վարիչ, 1996-2006 թթ. ղեկավարել է Երևանի պետական համալսարանի գրադարանի ավտոմատացման բաժինը, որից անմիջապես հետո ստանձնել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանի տնօրենի պատասխանատու պաշտոնը:

Հիմնարար գիտական գրադարանի ղեկավարման տարիները դարձան նոր ձեռքբերումների տարիներ: Նորարարական մոտեցումներ, նոր գաղափար-

Երևանի, այլև մարզային գրադարանների մասնագետներին: Այս շրջանը կարելի է բնութագրել համընդհանուր թվայնացման շրջան, ուր աշխատում էին բոլորն անխտիր՝ դառնալով անընդհատ պատվող շղթայի մի օղակը: Շղթան պատեցնողը միանշանակ պարոն Զարգարյանն էր:

Նրա շնորհիվ վերաթևոլվեց գրադարանավարն ու նրա գործը: Նոր գրադարանավարի ձևավորումը դարձավ առաջնային, քանի որ մեծ գաղափարները կարելի էր իրականություն դարձնել միայն

մասնագետների խմբի հետ: 2008 թվականից լինելով 33 զԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Գրադարանային գործ և տեղեկատվական աղբյուրներ» ամբիոնի վարիչը՝ պատրաստեց գրադարանավարների մի բույլ, որոնք հետո ակտիվ գործունեություն ծավալեցին հայաստանյան տարբեր գրադարաններում:

Տիգրան Զարգարյանի ջանքերով 2017 թ. իրականություն դարձավ Գրատպության թանգարանի ստեղծումը: Հայաստանում նմանը չուներ թանգարանի կայացումը խիստ կարևոր էր՝ հայ

## Հայ-գերմանական արշավախմբի հնագիտական պեղումները Արտաշատ մայրաքաղաքում



**ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտնականները Գեղամիայի Մյուսթերի համալսարանի գործընկերների հետ Արտաշատ մայրաքաղաքի պեղումների արդյունքում ստացել են նոր տվյալներ: Դրանք լույս են սփռում Հայաստանի անտիկ շրջանի մայրաքաղաքում ընկած տարածքում մշակութային, տնտեսական և քաղաքական գործընկերների վրա, բացահայտում այդ հուշակալի կենտրոնի՝ Մեսոսի ճանապարհով իրականացվող ընդարձակ առևտրային կապերն ու Մերձավոր Արևելքում նրա քաղաքական և մշակութային դերակատարության մանրամասները:**


«2018 թ.-ից Արտաշատ անտիկ մայրաքաղաքի թիվ 13 և 17 բլուրներն ու հուշարձանի դաշտային տարածքն ուսումնասիրվում են հայ-գերմանական «Արտաքսատա» ծրագրի շրջանակներում: Կատարվել է քաղաքի շուրջ 40 հա մակերեսի գեոֆիզիկական հետազոտությունը, որից հետո 13-րդ բլրի վրա պեղվել են Ք. ա. II-I դդ. սրբարան, Ք. ա. I - Ք. հ. I դարերի բնակելի համալիրներ և մի շարք դամբարաններ: Բլրի հյուսիսային մատույցներում շուրջ 0,5 կմ երկայնքով հայտնաբերվել են մեր տարածաշրջանում եզակի հռոմեական ակվեդուկի՝ կամրջային ջրատարի զանգվածող հիմքերը: Բլրից հարավ ընկած դաշտավայրում ուսումնասիրվել են ավելի քան 500 քմ տարածքով մոնումենտալ ուրարտական հասարակական կառույցի երկու հատվածները: 2023 թ.-ին սկսված 17-րդ բլրի պեղումներով բացահայտվեցին Ք. ա. I - Ք. հ. I դդ. արտադրական և բնակելի համալիրների ավերակներ, ինչպես նաև Ք. հ. II-III դարերին թվագրվող մոնումենտալ կղմինդրածածկ մի կառույց, հատակին փայտե տախտակամածի այրված գերաններով, որոնց ուսումնասիրությունը կշարունակվի առաջիկայում»,- ասաց արշավախմբի ղեկավար, ինստիտուտի Հիմն Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ Սկրտիչ Զարգարյանը:

Անտիկ Հայաստանի երրորդ մայրաքաղաք Արտաշատը, որը հաջորդել է Արմավիրին և Երվանդաշատին, հիմնադրվել է Ք. ա. 180-ական թթ.-ին Արտաշես Ա-ի կողմից և որպես երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն գործել է մինչև Ք. հ. V դ.-ի կեսերը: Քաղաքի հիմնական կառուցապատման կորիզը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Լուսառատ և Փոքր Վեդի գյուղերի տարածքում, իսկ Վիրապի 17 բլուրների վրա (Վերին քաղաք) և հարակից դաշտավայրում՝ մինչև Արաքսի փաղ (Ստորին քաղաք), շուրջ 600 հա ընդհանուր տարածքով: Արտաշատ հնագիտական հուշարձանը՝ քաղաքային արվարձանով և դամբարանադաշտերով, զբաղեցնում է Լուսառատ - Փոքր Վեդի - Տափերական - Շիրազ գյուղերի միջև ընկած դաշտավայրի զգալի մասը՝ ընդգրկելով շուրջ 3000 հա տարածք:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներն Արտաշատում պեղումներ են իրականացնում 1970 թ.-ից: Ըստ հնագիտական տվյալների՝ բնակությունը Արտաշատի տարածքում սկիզբ է առել դեռևս Ք. ա. V հազարամյակում: Վաղ երկաթի դարաշրջանում (Ք. ա. XI-IX դդ.) այստեղ եղել է խոշոր բնակավայր, որի կրծանումից անմիջապես հետո՝ մեծ ուրարտական քաղաք: Անտիկ դարաշրջանի բուռն ծաղկումից (Ք. ա. II - Ք. հ. V դդ.) հետո կյանքը հուշարձանի տարածքում շարունակվել է մինչև Ք. հ. XV դդ.:

«2003 թ.-ից ընթանում են Արաքսի ափին տեղակայված «Գետամերձ թաղամասի» պեղումները, որտեղ բացվել են հունա-հռոմեական ոճով կառուցված տաճարի ավերակներ, խճանկարներով զարդարված բաղնիքային համալիր, որմնակարներով բնակելի կառույցներ»,- ասաց Սկրտիչ Զարգարյանը:

Արտաշատի Փոքր Վեդի գյուղին հարող տարածքն ուսումնասիրվել է նաև հայ-լեհական հնագիտական ծրագրի շրջանակում (ՀԱԽ-Վարշավայի համալսարան): Ծրագիրն



ուղղված է եղել գիտական արդի միջոցների կիրառմամբ Հռոմի Տրայանոս կայսեր՝ Ք. հ. 116 թ.-ի արձանագրության հայտնաբերման տարածքի հետազոտմանը:

«Արտաշատի հետազոտման արդյունքներին են նվիրված հինգ մենագրություն և շուրջ հարյուր հոդված՝ հրատարակված Հայաստանում և արտերկրում»,- ասաց Սկրտիչ Զարգարյանը:

Նա նշեց, որ չնայած Հայաստանի պատմության և մշակույթի ասպարեզում իր բացառիկ նշանակությանը՝ այս հուշարձանի պահպանության ներկայիս վիճակը մտահոգիչ է: «Նրա դաշտային մասերը շարունակաբար ավերվում են գյուղատնտեսական, շինարարական աշխատանքների ու ավազահանության ընթացքում: Բլուրների լանջային տարածքը հիմնովին խաթարվում է տարեցտարի աճող հոր Վիրապի գերեզմանոցի կողմից: Հատուկ մտահոգության առարկա է վերջին տարիներին ակտիվացած զանախուզությունը, ինչի հետևանքով շարունակաբար ավերվում են բուն քաղաքի թաղամասերը»,- ասաց Սկրտիչ Զարգարյանը: Ըստ նրա՝ հիմն Արտաշատ հուշարձանի պատշաճ պահպանությունը հնարավոր է ապահովել նրա հիմնական տարածքի՝ 17 բլուրների և հարակից դաշտավայրի, հնագիտական արգելոցի սահմաններում ընդգրկման և այդ կարգավիճակին պատշաճ վերահսկման միջոցով:

**33 զԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## ԳԱՐԱՆԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ



(Համառոտ ակնարկ)

ՀՀ ԳԱԱ ութսունամյա գործունեության ընթացքում մշտապես զգալի է եղել համակարգում աշխատող կանանց շնորհակալ դերակատարումը: Անցած տասնամյակների ընթացքում գիտության ամենատարբեր բնագավառներում անցնելի հետք են թողել մեր անվանի կին գիտնականները:

Առանձնահատուկ պետք է ընդգծել մեր գիտական կազմակերպություններում աշխատող կրտսեր գիտաշխատողից մինչև գլխավոր մասնագետի հաստիքները զբաղեցնող կանանց գործունեությունը, ովքեր, չնայած ընտանեկան հոգսերին ու պարտականություններին, որպես մեր մեծ դպրության համեստ մշակներ, նվիրումով ծառայում են գիտությանը: Սակայն հարկ է նշել, որ ակադեմիայի ողջ պատմության ընթացքում ԳԱ իսկական և թղթակից անդամների կազմում մշտապես ցածր է եղել կին գիտնականների ներգրավվածությունը: Մինչ օրս այդ կազմում ընդգրկված է եղել ընդամենը 13 կին գիտնական (ներկայումս ունենք ԳԱԱ 2 իսկական և 3 թղթակից անդամ):

Այսօր ակադեմիական համակարգի գիտական աշխատողների մոտ 53%-ը կազմում են կանայք: Նրանցից 55-ը գիտությունների դոկտորներ են, 368-ը՝ թեկնածուներ: Ընդհանուր առմամբ համակարգում աշխատում է ավելի քան 1750 կին, ինչը կազմում է աշխատակիցների թվի մոտ 52%-ը: ԳԱԱ մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորողների ավելի քան 60%-ը նույնպես կանայք են:

Բացի գիտական աշխատանքից կանայք հիմնականում ընդգրկված են ինստիտուտների լաբորատորիաներում, գրադարաններում, հաշվապահական, համակարգչային և տեխնիկական սպասարկման աշխատանքներում: Իրենց աշխատանքին նվիրված կանանց թիվը զգալի է նաև ակադեմիական այլ կառույցներում՝ ԳԱԱ նախագահության աշխատակազմ, Հիմնարար գիտական գրադարան, Միջազգային գիտական կենտրոն և գիտական հանդեսների 17 խմբագրություններ:

Իսկ որ կանայք կարող են լինել նաև գիտության հմուտ կազմակերպիչներ վկայում է այն խոստում փաստը, որ ԳԱԱ յոթ ինստիտուտների գործունեությունը այսօր ղեկավարում են մեր կին գիտնականները: Զգալի թիվ են կազմում նաև ինստիտուտների փոխտնօրենների, բաժինների և լաբորատորիաների վարիչների, գիտական քարտուղարների և այլ ստորաբաժանումների ղեկավարների պաշտոններում աշխատող կանայք:

Գարնամային այս միամսյակի առթիվ շնորհավորելով բոլոր կանանց՝ մաղթում ենք քաջառողջություն, երջանկություն, հաջողություններ աշխատանքում և անձնական կյանքում:

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**



ՄՏ-ԲԵՐԻ ՀԱՐԹ-ԱԿ



ՄԵՆՔ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ ԵՆՔ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԱՐԱՎՈՐ ԲՈՆՈՒՄՆԵՐՈՎ: ԴԱ ՈՒՂՂԱԿԻ ՏԵՄՆԵԼ Է ՊԵՏՔ

Թեմայի վերնագիրը բխում է արդի գլոբալացված աշխարհի իրողություններից, որոնք ակնհայտ են դարձել, որ ժամանակակից աշխարհում չկա որևէ անկյուն ու հողակտոր, որ դուրս մնացած լինի գերտերությունների շահերի դաշտից: Լեռնային Ղարաբաղի շուրջ բախումները բացահայտել են, որ Երկիր մոլորակի այդ փոքրիկ երկրամասով անցնում են քաղաքական աշխարհի բոլոր միջօրեականները: Այդ համագամանքը պարտավորեցնում է հատկապես փոքր ժողովուրդներին ու պետություններին լինել քաղաքականապես շրջահայաց: Մանավանդ նրանց, որոնք գտնվում են մեծ տերությունների կամ նրանց դաշինքների շահերի հատման կետերում:

Հայաստանի Հանրապետությունն այդ պետությունների շարքում է դասվում: Նա չի կարող շրջանցել այն փաստը, որ Անդրկովկասով անցնում են աշխարհաքաղաքական հոսանքներ, որոնք «չեն հանդուրժում» այդ հոսանքների հունում հայտնված փոքր երկրների ջղաձիգ շարժումները: ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանին է վերագրվում ՀՀ արտաքին քաղաքական վարքի այն բանաձևը, որ հայտնի է կոմպլեմենտարության (փոխլրացչության) քաղաքականություն անվամբ:

Այդ ուղեգիծը դանդաղ, բայց վստահ առաջընթացով շարունակվել է հետագա տարիներին: Լինելով Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) և Հավաքական անվտանգության պայմանագրի (ՀԱՊԿ) անդամ՝ Հայաստանի Հանրապետությունը կառուցողական հարաբերություններ էր/է ձևավորում Եվրոպական միության (ԵՄ) հետ՝ նրա կողմից գործողության մեջ դրված Արևելյան գործընկերության ծրագրում՝ ուղղված տնտեսական, մշակութային ու քաղաքական համակարգված կապերի զարգացմանը: ՀՀ-ից բացի Ծրագրում

ընդգրկված էին հետխորհրդային տարածքի ևս հինգ պետություններ՝ Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան և Ադրբեջանի Հանրապետությունը: Հայաստանի Հանրապետությունը, այնուամենայնիվ, առանձնանում էր թվարկված երկրների շարքում: Լինելով ՀԱՊԿ-ի՝ ռազմաքաղաքական այդ կազմակերպության հիմնադիր պետություններից մեկը՝ ՀՀ-ն, միաժամանակ եվրոպական քաղաքակրթության և քրիստոնեական աշխարհի հարավարևելյան սահմանի այն երկիրն էր, որն ուներ արևելյան քաղաքակրթությունների հետ հարաբերությունների հարուստ պատմություն: Համաշխարհային չափանիշներով բացառիկ այդ պատմամշակութային ներուժը հրաշալի հիմք է Հայաստանի համար, որպեսզի քաղաքակրթությունների խաչմերուկում պատմականորեն հայտնված մեր երկիրը ներկայացնի նրանց երկխոսության հարթակը դառնալու հայտ: Ռազմաքաղաքական բուռն գործընթացները, որ վերջին տասնամյակներում ծավալվում

են եվրասիական տարածքներում, հաստատում են այդպիսի հարթակի պահանջարկված լինելը:

Ո՛չ իր հավակնոտ ու ագրեսիվ արտաքին քաղաքական վարքով հայտնի Թուրքիան, ո՛չ Մեծ Թուրանի ծրագրում Թուրքիայի ու Միջինասիական Թուրքեստանի միջև կապող օղակի դեր ստանձնած Ադրբեջանը, ո՛չ բացառապես դեպի Արևմուտք կողմնորոշված Վրաստանը, ո՛չ Բելառուսը, ո՛չ Ուկրաինան, ո՛չ Մոլդովան, որոնք չունեն Արևելքի հետ մշակութային հարաբերությունների պատմություն, Արևելք-Արևմուտք երկխոսության հարթակի դեր չեն կարող կատարել: Նման առաքելություն կարող է ստանձնել աշխարհաքաղաքական հավակնություններ չունեցող մի երկիր, որն ընդունելի կլինի եվրասիական աշխարհի մրցակցող եվրոպական ու ասիական «սալերի» միջև: Այդպիսի հայտ ներկայացնելու հնարավոր բոլոր չափանիշներին բավարարող միակ երկիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Կոմպլեմենտարությունը՝ որպես արտաքին քաղաքական մատյագիծ, բնական է, չի կարող տեղայնացվալ ու մնալ որպես միայն եվրասիական տարածաշրջանի երևույթ: Որպես ներառական չեզոքության կառուցողական ձև՝ այն կարող է և պետք է ձեռք բերի համընդգրկուն մշակություն՝ լցնելով «արտաքին քաղաքական» կողմնորոշում հասկացությամբ մեզ համար նոր բովանդակությամբ: Արտաքին քաղաքական ուղեգծի հայկական տարբերակը բնավ չի մշանակի, թե Հայաստանը «միաժամանակ նստում է երկու աթոռների վրա»: Քաղաքակրթությունների «Արևելք-Արևմուտք» երկխոսության ընդհանուր հարթակը, որ կգործի փոխըմբռնման, փոխհարստացման, փոխադարձ հանդուրժողականության կարգախոսներով, ոչ մի ընդհանուր բան չի ունենա «երկու աթոռների» քաղաքականության հետ:

Իրականում Հայաստանի հենց այդպիսի արտաքին քաղաքական վարքը կարող է ընդունելի լինել Ռուսաստանի համար, որն իր հարավային սահմաններում մեզմից բխող վտանգ չի տեսնի: Եվ ոչ միայն նրա համար:

Նման ծրագիրն առաջին հայացքից կարող է անիրական թվալ: Սակայն քաղաքական ավելի խորագնին քննությունը կարող է պարզել, որ իրականում այն ամենից իրատեսականն է գլոբալ քառախկության միտվող ներկա աշխարհում: Սակայն դա մեզանից կպահանջի ինտելեկտուալ ու նաև ֆինանսական ներդրումներ, որոնք մեզ համար մատչելի կլինեն: Պարզ է, որ գլոբալ երկխոսության հարթակի ստեղծման խնդիրը հեշտ խնդիր չէ: Գլխավորը դիվանագիտական ու տեղեկատվական դաշտերում սպասվող աշխատանքն է, եթե, իհարկե, ձեռնամուխ լինենք այդ գործին՝ առաջնորդվելով «Դիվանագիտությունը տրված չէ թշնամիներ վաստակելու համար» հայտնի սկզբունքով:

Ակնհայտ է, որ արտաքին քաղաքական կտրուկ շրջադարձերն ու իմպուլսիվ քայլերը մեզ հակացուցված են ոչ միայն այն պատճառով, որ Հայաստանը միմյանց հակառակ ընթացք ունեցող գլոբալ հոսանքների դաշտում հայտնված փոքրիկ երկիր է, այլև այն պատճառով, որ մենք այդպիսի վարքով դառնում ենք անկանխատեսելի գլոբալ դաշտի այն խաղացողների համար, որոնք մեզ ամեն կերպ կփորձեն ուրիշ մի թիմի հետ հակամարտության մեջ գտնվող իրենց թիմում ընդգրկել: Մենք ճնշումներ կստանանք տարբեր կողմերից և կդառնանք հակամարտությունների խաչմերուկ, ուր հնարավորությունը շատ մեծ է հենց մեր նման փոքր պետությունների համար:

Ցավոք, մեր քաղաքական օրակարգում այս հարցերը չեն քննարկվում: Անկասկած, նման արտաքին քաղաքական հարացույցի որդեգրումը հնարավոր է միայն ակտիվ և միաժամանակ ստեղծագործ ու շրջահայաց գործունեության շնորհիվ: Միայն այդպես այն կարելի է հնարավորությունների աշխարհից տեղափոխել քաղաքական իրողությունների աշխարհ: Բայց դրա համար մենք պետք է ուղղակի տեսնենք ակնհայտ այն իրողությունը, որ մենք պատմականորեն եղել ու մնում ենք քաղաքակրթությունների խաչմերուկում: Ոչ միայն մեր աշխարհագրական դիրքով, այլև մեր մշակույթով, մեր աշխարհասփյուռ համայնքներով, մեր պատմությամբ: Ուղղակի տեսնել է պետք փաստը և բացահայտել նրա քաղաքական ներուժը: Բայց այն դեռ սպասում է իր բացահայտողին:

Ալեքսանդր ՄԱՆԱՍՅԱՆ  
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Վերջերս ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել Մ. Աբեդյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Գոհար Կարազյոզյանի «Армения и армяне в записках европейских путешественников (Легенды и предания эпохи раннего христианства)» ուշագրավ գիրքը՝ նվիրված ժամանակակից հայագիտության մեջ քիչ ուսումնասիրված և արդիական՝ եվրոպական ճանապարհորդական գրականության մեջ ներկայացված հայ լեգենդների և ավանդությունների ուսումնասիրության թեմային:

Հիմնվելով XI-XVIII դարերում Հայաստան այցելած եվրոպացի ճանապարհորդների

ԸԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԸԱՅԵՐԸ ԵՎՐՈՊԱՑԻ ՃԱՆԱԴԱՐՇՈՐԴՆԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

հորդների գրառումների նյութերի վրա՝ մեծագրության հեղինակը պատմական տեսանկյունից հետևում է սյուժեների զարգացմանը, կարևորում պատմական տարածամասակյա և բազմաշերտ նյութը, սահմանում է «տեսակակազմ» սյուժեներ և թեմաներ, որոնք բնորոշ են ինչպես յուրաքանչյուր առանձին դարաշրջանի, այնպես էլ պատմական գործընթացի համար ամբողջությամբ:

Գ. Կարազյոզյանը նշում է, որ Արևելք մեկնող եվրոպացի ճանապարհորդները Հայաստանն առաջին հերթին դիտարկել են որպես հետքիդեղեյան մարդկության օրրան, որտեղ Նոյյան տապանը հանգրվանել է Արարատ լեռան վրա, և որտեղ հաստատվել է Աստծո ուխտը մարդկանց հետ՝ որպես քրիստոնեություն ընդունած նախաթոռն աշխարհում, որտեղ Աստծո Միածին Որդու մատնանշած վայրում աստվածային կամքով կառուցվել է տաճար:

Հայոց հողը ծնեց ու պահպանեց լեգենդներ, որոնք չէին կարող անտարբեր թողնել Հայաստան այցելած օտարերկրացիներին: Հարկ է հատուկ ընդգծել, որ հաճախ այն, ինչ հայերի համար սովորական էր և գրի չէր առնվում, օտարերկրացու համար արտասովոր էր, և նա, թվարկելով Հայաստանով անցնող երթուղու կետերը, անմիջապես գրի էր առնում իրեն օտար, երբեմն անսովոր ծիսակարգեր, արարողություններ, սովորույթներ, նկարագրում պաշտամունքային առարկաներ, հիշարժան վայրեր՝ վերստեղծելով ուշագրավ առանձնահատկությունները (տաճարների, վանքերի, հրաշագործ սրբապատկերների, սուրբ մասունքների, սուրբ աղբյուրների, սուրբ մշխարների, գերեզմանաքարերի, խաչքարերի), ինչպես նաև վերապատմում տեղի բնակիչներից ճանապարհին լսած տպավորիչ պատմություններ՝

ավանդազրույցներ և լեգենդներ: Դրանով իսկ արժևորվում էր այդ տեղեկատվությունը հայ ժողովրդի պատմական ուղու և նրա մշակութային ժառանգության նոր և համակարգված ըմբռնման տեսանկյունից:

Եվրոպացի ճանապարհորդների արձանագրած հարուստ բանախյուսական նյութը դարձել է ոչ միայն այն հասարակության սեփականությունը, որտեղ ծագել է, այլև այն հասարակության, որտեղից տարածվել է: Միանգամայն բնական է, որ բանախյուսական նյութի մի մասը դուրս է մնացել ճանապարհորդների տեսադաշտից և, ըստ այդմ, փակ է եղել այլ մշակույթների համար: Եվ, այնուամենայնիվ, գրավոր ամրագրված, հարցախույզ հայացքը հնարավորություն է տվել փրկելու ազգային մշակույթի մի ամբողջ շերտ, որը կարող էր մոռացության մատնվել այն միջավայրում, որտեղ առաջացել է: Ծանապարհորդների արձանագրած նյութը հնարավորություն է տալիս վերականգնելու բանավոր ավանդության մեջ եղած և մեզ չհասած հայկական լեգենդների կորած տարբերակները:

Այս ուսումնասիրությամբ գիտական շրջանառության մեջ է դրվում հայ ժողովրդի մշակութային ժառանգության պատմության վերաբերյալ նոր և չուսումնասիրված նյութ՝ ամփոփված մի քանի տասնյակ հեղինակների ճամփորդական՝ ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն, իտալերեն, գերմաներեն գրառումներում, որոնց թարգմանությունը կատարել է հենց մեծագրության հեղինակը: Առանձնահատուկ արժեք է հավելվածում բնօրինակ լեզվով ներկայացված լեգենդների հավաքածուն:

Հայոց պատմության՝ երկրի քրիստոնեացման հետ կապված ժամանակաշրջանի վերաբերյալ բազմաթիվ ավանդազրույց-

ներ կան, որոնք կարևոր դեր են ունեցել վաղ միջնադարում պատմական մտքի զարգացման գործում: Քրիստոնեության ընդունմամբ և հայ գրերի գյուտով ստեղծվում են զգալի թվով պատմական աշխատություններ, որոնց հեղինակները, հասու լինելով հույն, հռոմեացի, սիրիացի պատմաբանների լավագույն ավանդույթներին, չեն շրջանցում հայկական ավանդազրույցները: Եվ, այնուամենայնիվ, հին տարեգրությունները հենվում են համապատասխան բանախյուսական տեքստերի վրա:

Հեռավոր անցյալի բանավոր ավանդույթը չէր կարող անմիջականորեն արձանագրվել, և այն ամենը, ինչ մենք կարող ենք իմանալ դրա մասին, ընդամենը անուղղակի արտացոլումն է գրավոր ավանդության հուշարձաններում: Ավելին, գրավորի մեջ բանավորի այս արտացոլումը միշտ և անխուսափելիորեն փոխակերպվել ու աղավաղվել է՝ անցնելով եկեղեցական աշխարհընկալման գոյիներով: Վերոնշյալը հիմնավոր պատճառներով վերաբերում է նաև եվրոպացի ճանապարհորդների գրառումներին:

Գոհար Կարազյոզյանը արժեքավոր և շնորհակալ աշխատանք է կատարել. նա ոչ միայն թարգմանել, այլև գիտական պատշաճ մակարդակով մեկնաբանել և ծանոթագրել է եվրոպացի ճանապարհորդների արձանագրած՝ Հայաստանում քրիստոնեության ձևավորման և տարածման ժամանակաշրջանին վերաբերող տասը լեգենդ և ավանդույթ:

Քրիստինե ԲեՋԱՆՅԱՆ  
Բանասիրական գիտությունների թեկնածու

## ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՋՄՈՅԱՆԻ «ԻՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»



Վաստակաշատ բանասեր, իրանագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմանուշ Կոջմյանը մեկ հատորով ամփոփել է տարիների իր գիտական հունձքը՝ «Իրանագիտական հետազոտություններ» ընդհանուր խորագրի ներքո (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2024):

Արմանուշ Կոջմյանի հայերեն և ռուսերեն ուսումնասիրություններից սույն հատորում ընդգրկվել են 45-ը (հոդվածներ, ակնարկներ, գրախոսականներ, խմբագրականներ, նաև հարցազրույց), որոնք վերաբերում են պարսից գրականությանը, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմանուշ Կոջմյանը մեկ հատորով ամփոփել է տարիների իր գիտական հունձքը՝ «Իրանագիտական հետազոտություններ» ընդհանուր խորագրի ներքո (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2024):

նության պատմությանը, ժանրային ձևերի զարգացման խնդիրներին, հայ-իրանական պատմամշակութային կապերին, հայ իրանագիտությանը, գրականագիտության և աղբյուրագիտական այլևայլ հարցերի: Ընտրված աշխատություններն ամփոփում են ինչպես նեղ մասնագիտական խնդիրների, այնպես էլ համընդհանուր թեմաների, ուստիև սույն ժողովածուն հետաքրքրական կլինի թե՛ մասնագետների, թե՛ ընթերցողների համար:

Բազմաթիվ ուշագրավ և ուսանելի նյութերի շարքում հիշենք «Մշակութային կոդապուտ կամ պատասխան Արիֆ Ռազվին» հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացրել է Աղբյուրագիտության պատմության «գիտականների» կողմից պարսիկ մեծ բանաստեղծ Նիզամիին աղբյուրագիտական ներկայացնելու և նրա «խոսքով և շիրիմ» վիպերգի հայ հերոսուհու ազգությունն աղավաղելու պատմությունը՝ ցույց տալով դրա սնանկությունն ու հանցավոր բնույթը: Արևելագիտության համար չափազանց կարևոր բացահայտումներ են մասնավորապես Կոջմյանի կատարած հայ և պարսից միջնադարյան բանաստեղծության համեմատական քննությունները (օրինակ, Նարեկացու և Ռուբայիի), Ղուրանի միջնադարյան հայերեն թարգմանությունների վերաբերյալ ուսումնասիրությունները և այլն, իսկ ընթերցողի համար՝ իրանական մշակույթի մասին ընդհանուր ակնարկը, նրա զարգացման համայնապատկերը՝

միջնադարյան արվեստից մինչև կինոարվեստ և այլն...

Գրքի էջերում կարելի է գտնել բազմաթիվ կարևոր մտքեր, ընդհանրացումներ: Մեջբերենք հեղինակի բնութագիրը թարգմանական արվեստի մասին. «Թարգմանությունը դիալեկտիկական երևույթ է, հետևաբար այն մույնպես հեռավոր հատկություն ունի: Փոփոխվում են հոգևոր արժեքների գեղագիտական չափանիշները, փոխվում, զարգանում են պոետիկայի լեզուն և ոճը: Թարգմանիչներն էլ իրենց ժամանակի արդյունքն են և յուրովի են ըմբռնում և մեկնաբանում բնագիրը: Նույն բանաստեղծին թարգմանում են շատերը, սակայն երբեք իրար չեն կրկնում: Բազմաթիվ հաջողված թարգմանություններ զարգացման երկար ճանապարհ են անցել: Այդ պատճառով էլ ամեն մի սերունդ իրավունք ունի նորից ու նորից ամբողջաբանաբար դասականների թարգմանությունը, քանի որ թարգմանչի վարպետությունից, բանաստեղծական տաղանդից է կախված ոչ միայն սեփական ժողովրդի ճանաչողության սահմանների ընդլայնումը, այլև թարգմանվող հեղինակի հետագա ծակատաշիվը:

...Իսկական թարգմանիչը պետք է դուրս գա լեզվաբանական ճշմարտացիության սահմաններից և արտահայտի էթնոմշակութային ճշմարտացիությունը» (էջ 136, 139):

Արմանուշ Կոջմյանը 1967 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը, 1971-1974 թվականներին սովորել է

ԽՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի գրականությունների բաժնում, 1974 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում: Դասավանդել է երևանյան մի քանի բուհերում: Հեղինակ է ութ գրքի և յոթ տասնյակից ավելի գիտական հրատարակությունների՝ «Քառյակը պարսկալեզու դասական պոեզիայում X-XII դդ.» (1981, ռուսերեն), «Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան» (X-XVI դդ.), (1997), «Ղուրանը հայոց մեջ» (2003) և այլն: Նրա թարգմանությամբ առանձին հատորներով լույս են տեսել նաև պարսիկ միջնադարյան խոշորագույն բանաստեղծներ Բաբա Թահերի, Ռաֆի, Ռուդակի, Օմար Խայամի և այլոց ստեղծագործությունները՝ հայ բանաստեղծների (Սիլվա Կապուտիկյան, Գևորգ Էմին, Վահագն Դավթյան, Արամայիս Սահակյան) համագործակցությամբ:

Ի դեմս Արմանուշ Կոջմյանի «Իրանագիտական հետազոտությունների»՝ ասպարեզի վրա ունենք մի բացառիկ աշխատություն, որի թարգմանությունը պարսկերեն, մաև՝ անգլերեն, խիստ անհրաժեշտ է մեր օրերում՝ ոչ միայն հայ գիտական միտքն աշխարհին ներկայացնելու, այլև գիտության կեղծարարներին արժանի պատասխան տալու առումով:

**Արծիվ ԲԱՆՉԻՆՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների թեկնածու

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ



## Սարգիս Գավալաջյան

Հայ-Ռուսական համալսարանի և ՀՀ ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող Սարգիս Գավալաջյանը ճանաչվել է «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում անցկացվող «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականներին խրախուսման մրցույթի» շահառու է:

Երիտասարդ գիտնականը շահառու է ճանաչվել «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման ավելի բարձր քառորդում առաջին անգամ գիտական հոդվածի տպագրության համար: Ներկայացրել է «Optical Properties of Conical Quantum Dot: Exciton-Related Raman Scattering, Interband Absorption and Photoluminescence» գիտական հոդվածը, որը տպագրված է «Nanomaterials» ամսագրում: Համահեղինակներն են Գրիգոր Մանթաշյանը, Գոռ Խառատյանը, Հայկ Սարկիսյանը, Պայծառ Մանթաշյանը, Դավիթ Հայրապետյանը և Հունաստանի Պատրասի համալսարանի պրոֆեսոր Բասկուտաս Սոտիրիոսը:

Սարգիս Գավալաջյանը նշեց, որ աշխատանքի նպատակն էր ցույց տալ, թե ինչքան արդյունավետ կարելի է օգտագործել կիսահաղորդչային կոնաձև թվանալիս կետերը որպես լույսի աղբյուր: Ըստ նրա՝ ստացված արդյունքները թույլ են տալիս ավելի լավ հասկանալ կոնաձև թվանալիս կետերի օպտիկական հատկությունները և կարող են օգտակար լինել նոր ֆոտոնային սարքերի նախագծման համար: «Դրանք կարող են

օգտագործվել թվանալիս կետերի չափը և կազմը նախագծելու համար՝ հասնելու հատուկ օպտիկական հատկությունների, ինչպիսիք են ճառագայթային նեղ լայնությունները կամ բարձր ֆոտոլյումինեսցենտային թվանալիս ելքերը: Այս հատկությունները կարևոր են բարձր արդյունավետությամբ ֆոտոնային սարքերի նախագծման համար, ինչպիսիք են լազերները, էլրանները և սենսորները: Մեկ այլ դեպքում, թվանալիս կետերի ժապավենային կառուցվածքը նախագծելով, հնարավոր է ուժեղացնել լույսի կլանումը և լիցքի տարանջատումն արևային բջիջներում», - ներկայացրեց Սարգիս Գավալաջյանը:

Իր մասնագիտության ընտրության մասին նա ասում է. «Թվերի հետ աշխատելու և մեզ շրջապատող երևույթների բացատրությունները փնտրելու համար ֆիզիկան կատարյալ է: Ֆիզիկան արվեստ է: Ֆիզիկայով զբաղվելու համար անհրաժեշտ է դուրս գալ ստանդարտ մտածելակերպի կաղապարներից»:

Սարգիս Գավալաջյանը ներգրավված է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր-2023»-ում, Երվանդ Թերզյանի անվան Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ԳՀԳՄՀ-ANSEF) դրամաշնորհային ծրագրում և ԵՄ «H2020 NanoQIQO» ծրագրում:

Իր գիտական գործունեության ամենատարվողիչ իրադարձություններից նա համարում է կանադացի օպտիկական ֆիզիկոս Դոնա Սթրիքլենդի հետ հանդիպումը, ով ֆրանսիացի ֆիզիկոս Ջերարդ Մուրուլի հետ 2018 թվականին ստացել է Նոբելյան մրցանակ՝ ակտիվացած իմպուլսների ուժգնացումը հայտնագործելու համար: «2022թ. Հայաստանում հնարավորություն ունեցա լսելու նրա դասախոսությունները՝ կապված իր հետազոտությունների հետ, և ծանոթանալու Նոբելյան մրցանակ ստանալու իր անցած ուղուն», - ասաց Սարգիս Գավալաջյանը: Կարևորում է գիտական նախաձեռնությունների գործունեությունը. «Օրինակ՝ «Գիտուժը» լավ հարթակ է Հայաստանում գիտությունը համրահեռակելու և գիտնականներին խրախուսելու համար»:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող Վահրամ Սերոբյանը «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում իրականացվող «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականներին խրախուսման մրցույթի» շահառուներից է:

Վահրամ Սերոբյանը մրցութում շահառու է ճանաչվել «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման ավելի բարձր քառորդում առաջին անգամ տպագրության համար: Ներկայացրել է «Aramazdospirifer orbelianus (Abich, 1858) n. comb., a new cyrtospiriferid brachiopod genus and a biostratigraphically important species from the lower Famennian (Upper Devonian) of Armenia» հոդվածը:

Այն տպագրվել է «Comptes Rendus Palevol» ամսագրում, որը Q1 կատեգորիայի էլեկտրոնային և գրախոսվող ամսագիր է՝ նվիրված հնէաբանությանը և էվոլյուցիային վերաբերող մի շարք այլ գիտությունների: Աշխատանքի համահեղինակներն են Ֆրանսիայի Լիլի համալսարանի պրոֆեսորներ Տանիել Դանելիանը, Քեթրին Քրոնին, Բելգիայի բնական գիտությունների թագավորական ինստիտուտի հնէաբանության դեպարտամենտի անդամ, հնէաբանական գիտությունների թեկնածու Բերնարդ Մոտեկինը, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի հնէաբանության և շերտագրության լաբորատորիայի վարիչ Արայիկ Գրիգորյանը:

Հոդվածում առաջին անգամ ուսումնասիրվել և ցուցադրվել են «Spirifer orbelianus Abich, 1858» բրախիոպոդի տեսակի ներքին կառուցվածքը և արտաքին միկրոկառուցվածքային առանձնահատկությունները: Այս տեսակն էնդեմիկ է և հանդիպում է միայն Հայաստանում՝ ստորին Ֆամենում (շուրջ 370 միլիոն տարի) նստվածքային առաջացումներում:

Քանի որ այս տեսակը հանդիպում է միայն վաղ Ֆամենի ընթացքում և շատ առատ է նստվածքային ապարներում, այն ունի մեծ կենսաշերտագրական նշանակություն:



## Վահրամ Սերոբյան

նակություն: Այլ կերպ ասած, եթե Հայաստանի տարածքում, հիմնականում Վայոց Ձորի մարզում, որևէ տեղամասի նստվածքներից գտնվի այս տեսակին պատկանող որևէ բրախիոպոդի խեցի, ապա վստահորեն կարելի է պնդել, որ այդ տեղամասի նստվածքային առաջացումներն ունեն շատ հին ծագում՝ շուրջ 370 միլիոն տարի և կարելի է վստահորեն ասել, որ այդ ժամանակ տվյալ տեղամասը եղել է նախկինում գոյություն ունեցող Թետիս օվկիանոսի մի մաս: Այսինքն, ներկայում չունենալով ելք դեպի ծովեր և օվկիանոսներ, կարելի է ուսումնասիրել նախկինում եղածները, որոնք պալեոգոյի ընթացքում՝ 382.7-251 միլիոն տարի առաջ, ծածկում էին Հայաստանի ներկա տարածքի մի մասը, ինչպես նաև դրանցում բնակված օրգանիզմներն ու դրանց էվոլյուցիան:

Աշխատանքում բացահայտվել է գիտությանը նախկինում անհայտ բրախիոպոդի մի նոր մոնոսպեցիֆիկ ցեղ (=genus), որը հանդիպում է միայն Հայաստանի տարածքում, և այն անվանվել է «Aramazdospirifer»: Անվանումը տրվել է ի պատիվ Արամազդի, ով համարվում է նախաքրիստոնեական հայկական դիցաբանության գերագույն Աստվածը՝ բոլոր Աստվածների հայրը:

Աշխատանքն արդիական է. կլիմայի մոդելավորումն օգտակար գործիք է գլոբալ տաքացման պատճառներն ու կլիմայական փոփոխություններն ավելի լավ հասկանալու համար:

**Սոնիկա ԵՐԻՑՅԱՆ**



ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ-100

էր, որի հիմնական նպատակը թեհրանում ֆաշիստական գործակալների հայտնաբերումն ու վնասագերծումն էր: Խմբի անդամներն արագ տեղաշարժվելու համար երթևեկում էին հեծանիվներով, որի համար էլ ստացել էին «Թեթև հեծելագորայիններ» անվանումը: Նրանց արդյունավետ գործունեության շնորհիվ միայն առաջին 2 տարվա ընթացքում բացահայտվեց գերմանական հետախուզության ավելի քան 400 գործակալ:

1942 թ. Գևորգ Վարդանյանը «Կենտրոնի» հատուկ առաջադրանքով ընդունվեց Թեհրանում գործող անգլիական գաղտնի հետախուզական դպրոց, որտեղ ստացած բարձրորակ օպերատիվ պատրաստությունը նրան հետագայում շատ օգտակար եղավ:

Գևորգ Վարդանյանն իր խումբ ներգրավեց ընկերոջը՝ Օնիկ Փաշկանյանին (հետախուզական աշխատանքն ավարտելուց հետո նա աշխատել է ԴեսՍԳ ՊԱ պատմության ինստիտուտում, ապա ՊԱ հիմնարար գրադարանում), նրա 16-ամյա քրոջը՝ Գոհարին, որը հետագայում՝ 1946 թ., դարձավ Գևորգ Վարդանյանի կինը: Սկսած 1942 թ.՝ Գոհարը Գևորգ Վարդանյանի հետախուզական ծանր, բարդ ու չափազանց վտանգավոր աշխատանքի անբաժան գործընկերուհին էր:

ԼԵԳԵՆԴԱՐ ՀԵՏԱԽՈՒՅՋԸ

Նել հատուկ հանձնարարությամբ: Հոր օրինակով հետախուզական գործին նվիրվեց նաև Գևորգը: 1940 թ. փետրվարին 16-ամյա պատանին ուղիղ կապ հաստատեց Թեհրանում գտնվող Խորհրդային արտաքին հետախուզության ղեկավար Իվան Աղայանցի հետ և այնուհետև ամբողջ կյանքը նվիրեց հայրենիքի անվտանգության և հզորության ամրապնդման խիստ անհրաժեշտ, բայց չափազանց պատասխանատու և վտանգավոր գործին:

Հայտնի է, որ 1941-1942 թթ. գերմանական հետախուզությունն Իրանում ուներ ավելի քան 20.000 գերմանացի հետախույզներ, որոնք քողարկված էին առևտրականների, գործարարների և զինվորական հրահանգիչների անվան տակ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին ֆաշիստական Գերմանիայի կառավարությունը ձգտում էր ամեն կերպ Իրանին ներքաշել ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի մեջ: Սակայն Իվան Աղայանցի գլխավորած Խորհրդային հետախույզների հերոսական աշխատանքի շնորհիվ ձախողվեց այդ մտադրությունը:

Առաջին առաջադրանքը, որը տրվեց Գևորգ Վարդանյանին, ավագ գործընկերներին օգնելու նպատակով իր հասակակից տղաներից հուսալի խումբ կազմակերպելն

Գևորգ Վարդանյանի խմբի և ընդհանրապես Խորհրդային հետախուզության ամենամշակվող գործողությունն Իրանում 1943 թ. աշնանը գերմանական հետախուզության մշակած «Երկար թռիչք» ահաբեկչության տապալումն էր: «Երկար թռիչքի» հիմնական նպատակը 1943 թ. նոյեմբերի 28-ից-դեկտեմբերի 1-ը Թեհրանում կայանալիք ԽՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի ղեկավարների կոնֆերանսի օրերին «Մեծ եռյակի» առաջնորդների՝ Ստալինի, Ռուզվելտի ու Չերչիլի ֆիզիկական ոչնչացումն էր: Շնորհիվ Գևորգ Վարդանյանի խմբի անդամների հմուտ գործողության՝ ժամանակին հայտնաբերվեց և վնասագերծվեց ֆաշիստ դիվերսանտների դեսանտային խումբը: Բեռլինում իմանալով այդ մասին՝ հրաժարվեցին «Երկար թռիչք» գործողությունից, որը պետք է իրականացվեր հանրահայտ Օտտո Սկորցենիի գլխավորությամբ...

1951 թ. երիտասարդ ամուսինները «Կենտրոնի» համաձայնությամբ վերադառնում են Երևան և սովորում Բյուտովի անվան օտար լեզուների լեզվագրական ֆակուլտետում: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո նրանք հորինված անուն-ազգանուններով երկար տարիներ հետախուզական պատասխանատու աշխատանք են կատա-

ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԿՅՈՒՆՔԻՑ



Համաքաղաքացիների խնդրանքով Միքայել Նալբանդյանը, որ մի շարք լեզուների էր տիրապետում, մեկնում է Զնդկաստան՝ Կալկաթա՝ հայ մեծահարուստ Մասեհ Բաբաջանյանի՝ կրթական նպատակներով նոր-նախիջևանցիներին կտակած գույքարժեքի ստանալու: Շուրջ հինգ ամիս տևած դատական քաջքննչությանից հետո նա կարողացավ մասամբ ստանալ հատկացված գույքարժեք: Փոքրիկ պատճառով Կալկաթայից վերադարձի ճանապարհին տասը օրով ընկնում է Իտալիա, որտեղ էլ գիտակ մարդկանց Խորհրդով հնդկական դրամը փոխանակում է իտալականով:

Այդ օրերին Իտալիայի նավահանգիստներում և տարբեր վայրերում երևում էին կարմիր շապիկներով երիտասարդներ, որոնք նոր-նոր կազմավորվող գաղութական ժողովրդական-ազատագրական զորաջոկատների անդամներն էին:

Շարունակվող փոքրիկ պատճառով հարկադրված պարապուրդը լցնելու նպատակով Միքայելը շրջում է Իտալիայով մեկ,

ՄԻ ՍԻՐԻ ՊԱՏԱՌԻԿ

լինում է նաև Վենետիկում: Օրերից մի օր, երբ Միքայելը զբոսնում էր Վենետիկում, հասնում է քաղաքի կենտրոնում գտնվող Սուրբ Մարկոսի հնգազմբեթ տաճար, որը գտնվում էր համանուն հրապարակում. հանկարծ զարմանալի արագությամբ հրապարակը դատարկվում է, մարդիկ հապշտապ հեռանում են:

Մինչ զարմացած Միքայելը փնտրում էր որևէ մեկին՝ մարդկանց հեռանալու պատճառն իմանալու համար, հրապարակի հակառակ կողմից հանկարծ դուրս է գալիս 16-17-ամյա մի դեռատի իտալուհի և փորձում հրապարակը կտրել-անցնել՝ դեմ հանդիման գալով Նալբանդյանին:

Միքայելը դանդաղաբայլ գնում է ընդառաջ՝ զոնե նրանից մարդկանց «փախուստի» մասին ինչ-որ բան իմանալու նպատակով: Իրեն մոտեցող աղջիկը նայում է խաչմերուկից ծախ, որը Նալբանդյանին տեսանելի չէր, և սարսափած ու շփոթահար ձեռքից բաց թողնում նկարչական թղթերի տրցակն ու ներկատուփը: Միքայելը շտապ հասնում է աղջկան և նրան օգնում ավաքելու սալահատակին ցրված թղթերն ու ներկերը: Մի քանի թերթ ու ներկ հագիվ հավաքած Նալբանդյանը լսում է սալահատակին զարկվող պողպատե պայտերի ահագնացող դոփյուրը և հագիվ է հասցնում աղջկան, դեպի իրեն քաշելով, պատսպարել Սուրբ Մարկոսի արձանի պատվամզանի հետևում: Սրաներկ ու սրընթաց անցնում է ավստրիացիների մի զորաջոկատ (այդ տարիներին Իտալիան գտնվում էր ավստրիական լծի տակ): Աղջիկը վախից ու հուզմունքից դողում էր:

-Գուցե ուղեկցե՞մ Ձեզ, - հարցնում է Միքայելը:

Միքայելը թևանցում է անուն իտալուհուն, և նրանք երկար քայլում են լուռ: Վերջապես աղջիկը կանգ է առնում շենքերից մեկի մուտքի առաջ և կամացուկ ասում է՝ հասանք:

Միքայելը հապաղում է բաց թողնել նրա թևը և հարցնում է.

-Եթե տարիներ անց հիշելու լինեմ այս օրը, արդյոք ո՞ւմ պիտի հիշեմ:

-Լաուրային,- մայելով արևելյան դիմագծերով համակրելի երիտասարդին և փոքրիկ շիկնելով, թոթովում է աղջիկը:

Ծանոթությունը կայանում է:

Հաջորդ օրերին արդեն նրանք հանդիպում էին և երկա՛ր-երկա՛ր գրուցում իրենց հայրենիքների ճակատագրերի մնացորդները, աշխատասեր և ստեղծագործ ժողովուրդների մասին, երբ իրենց ժողովուրդները կազատագրվեին օտարների ատելի լծից: Հանկարծ Լաուրան, որ հիացմունքով լսում էր ոգևորված Միքայելին, որը պատմում էր Հայաստանի փառավոր անցյալի, հանում ազատության մղած դարավոր պայքարի մասին, ընդհատում է երիտասարդին և հարցնում, թե ինչպես է հնչում հայերեն «ազատություն» բառը: Երբ տղան արտաբերում է այն, Լաուրան բացականչում է, որ այն չափազանց մեղեդային է: Նա ընկնում է խոհերի մեջ, սակայն մի ակնթարթ անց ասում է.

-Ես անպայման պիտի նկարեն Ձեր դիմանկարը և այն կդնեմ «Ազատություն»:

Հաջորդ հանդիպումներն անցնում էին աղջկա արվեստանոցում: Լաուրան նկարում էր Միքայելին, և ժամերն անցնում էին աննկատ, քանի որ զրույցներն ավելի ու ավելի ջերմ ու անմիջական էին դառնում:

Մի օր Միքայելը հանդիպման եկավ

մտազբաղ ու տխուր:

Անհանգստացած Լաուրայի հարցերին նա պատասխանեց, որ հաջորդ առավոտյան ինքը մեկնելու է:

Աղջիկը կարկանդակ, արցունքի երկու վճիտ կաթիլ վայր գլորվեցին նրա աչքերից, և նա դողդողացող ձեռքերով պայուսակից հանեց իր լուսանկարը և տալով Միքայելին՝ ասաց.

-Խնդրում եմ, վերցրո՛ւ: Գուցե երբեմն ցանկություն ունենաս ինձ հիշելու... Իսկ քո լուսանկարն էլ ինձ թող, որ նրանով ավարտեմ կիսատ դիմանկարդ:

Բաժանման թախիծը, ծովացող կարոտը և նորածիլ սերը կնքվեցին մեղմ ու բնորոշ մի համբույրով...

Միքայելը հեռացավ՝ իր հետ տանելով Ադրիատիկի երկնագույն ցուլերով շողացող աչքերի հմայքը:

Տարիներ անց՝ աշնանային մի մառախլապատ ու թախժոտ օր, Միքայելը, մտած Մոսկվայի՝ Արբատի փողոցում գտնվող իր սենյակում, «Հյուսիսսփայլի» խմբագրական աշխատանքից հոգնած, հայացքը գցեց Լաուրայի՝ լուսամուկիին հենած լուսանկարին: Մտքերը տարան նրան հեռո՛ւ-հեռո՛ւ: Հետո ընդոստ շարժումով վերցրեց գրիչը, թաթախեց թանաքի մեջ, և իր առջև դրված մաքուր թղթին հայտնվեց նոր ստեղծագործության վերնագիրը՝ «Իտալացի աղջկա երգը»:

Այսօր եղիչե Զարեմի անվան գրականության և արվեստի թանգարանի՝ Նալբանդյանի ֆոնդում պահվում են Լաուրայի լուսանկարն ու Նալբանդյանին ուղղված նրա մամակներից մեկի պահպանված եզակի օրինակը:

\*Որոշ կրճատումներով արտատպվում է «Հետաքրքրաշարժ պատմություններ, փաստեր հայ մեծերի ու Հայաստանի մասին» գրքից (կազմող՝ Ն. Վիրաբյան):



## «Գյումրիի դարբնության ավանդույթը» հայտը գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում



Ասլամազյան քույրերի տուն-թանգարանի դարպասը

«Գյումրիի դարբնության ավանդույթը» հայտը գրանցվել է ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում: Որոշումը կայացվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի 18-րդ միջկառավարական նստաշրջանում, որը տեղի է ունեցել 2023 թ. դեկտեմբերի 4-9-ին՝ Բուսովանայի Կասամե քաղաքում:

Հայտը նստաշրջանում ներկայացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Հայտի փաթեթում առանցքային տեղ է գրավել հատուկ գրավոր ձևաչափը, որտեղ մանրամասնորեն ներկայացվում է արժեքի բնութագիրը: ՀՀ զԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Աղասի Թադևոսյանն է հեղինակել նշված նյութը՝ հենվելով այս թեմայի շրջանակներում իրականացրած իր հետազոտությունների և հրատարակությունների վրա: Այս թեմայով նա հեղինակել է «Դարբինը Հայոց ծիսակարգում» և «Գյումրի քաղաքի դարբնոցային մշակութային ժառանգությունը» մենագրությունները և բազմաթիվ հոդվածներ: «Ես իրականացրել եմ նաև ազգագրական հետազոտական աշխատանք՝ հիմնախնդրի արդի վիճակի նկարագիրը և մանրամասները վեր հանելու նպատակով: Այս հետազոտության գիտական արդյունքը եղել է Գյումրիի դարբնության ավանդույթի՝ որպես ոչ նյութական մշակութային արժեքի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող բնութագիրը ներկայացնող տեքստի կազմումը»,

- ասաց Աղասի Թադևոսյանը: Տեքստում նկարագրված են եղել Գյումրի քաղաքի արհեստավորական համատեքստը և այն միջավայրը, որում պատմականորեն ձևավորվել ու զարգացել են քաղաքային դարբնության ավանդույթն ու երկաթի գեղարվեստական մշակման հմտությունը: Ներկայացվել են քաղաքային դարբնության առանձնահատկությունները, արհեստի զարգացման և դիմամիկ կերպով վերարտադրության գործում ժառանգականության դրսևորումների կարևորությունը և սերնդեսերունդ արհեստը փոխանցելու մշակութային համատեքստը: «Աշխատանքի կարևոր գիտական արդյունքներից են նաև Գյումրի քաղաքի դարբնության ինքնատիպությունը հավաստող մշակութային նրբերանգների ներկայացումն ու վերլուծությունը: Հետազոտության գիտական խնդիրներից է եղել ոչ միայն դարբնության ավանդույթի, այլև արդիականության պայմաններում դրա կենսունակության պատճառների ներկայացումը», - ասաց Աղասի Թադևոսյանը:

Նա նշեց, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում տվյալ արժեքի գրանցման վերաբերյալ տեղեկատվական վերլուծական բնույթի հոդված է ներկայացվել Ռուսաստանի Դաշնության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային համձնաժողովի «Вестник комиссии Российской Федерации по делам ЮНЕСКО» ամսագրի հերթական համարում: Հոդված հրատարակելու առաջարկ է ստացվել նաև հեղինակավոր Սմիթսոնյան ինստիտուտի կողմից (Smithsonian Institution, USA): Հոդվածը ներկայում գտնվում է պատրաստման փուլում:

Հետազոտական աշխատանքների իրականացմանը, որպես գլխավոր հետազոտողի օգնական, ներգրավված է եղել ՀՀ զԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ Արգամ Երանոսյանը, ով նաև իրականացրել է վիզուալ մարդաբանության հետ կապված լուսանկարչական աշխատանքների հիմնական մասը:

«Գյումրիի դարբնության ավանդույթը» հայտի պատրաստումը և դրա համար անհրաժեշտ հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ-ի և «Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի» հատուկ պատվերի և այն վավերացնող մասնագիտական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

**ՀՀ զԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**



Զիթողյանների տան պատշգամբը



## ՉԱՅՆ ՄԵԾԱՑ. ԲԱՅՑԻ

*Շուրջ 150 տարի առաջ հանճարեղ վիպասան Րաֆֆու արտահայտած մտքերն այսօր էլ խորհելու և հետևություններ անելու տեղիք են տալիս:*

«Ամեն մի հայ, առանձին վերցրած, առյուծ է, ինչպես և խելքով ու դատողությամբ՝ հսկա: Բայց ընկերական ոգու բացակայությունը խմբովին գործելիս ջլատում է նրա ուժերը: Չգեցեք մենակ հային վտանգների փոթորկի մեջ, նա արժանավորապես կպաշտպանի յուր գլուխը: Բայց խմբեցեք մի քանի հայեր միասին, և նրանք պաշտպանվելու կամ հարձակվելու փոխարեն կսկսեն խորհել, մտածել, հակաճառել և վերջապես, թշնամուն թողած, միմյանց միսն ուտել: Այո՛, անհատականությունը հայի գլխավոր թշնամին է, և նա տարածված է մեր բոլոր դասակարգերի և բոլոր գործերի մեջ»:

«... Մեզանում կան մի տեսակ կարճամիտներ, դժբախտաբար նրանց թիվը փոքր չէ, որոնք երևակայում են, թե հայի ապագան Տաճկաստանումն է, թե հայի գոյությունը կապված է թուրքաց կառավարության գոյության հետ: Նրանք մտածում են, թե այժմյան բարբարոսությունները, հարստահարությունները մի օր կվերջանան, երբ թուրքը կքաղաքակրթվի, այն ժամանակ, ասում են, հայը քաղաքացու հավասար իրավունք և ազատ կյանք կվայել»:

Այդ ցնորք է:

Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավագակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա:

Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը: Նրա ամեն մի տողը արյունով և արտասուքով է գրված: Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը:

Մի՞թե երեկվա զագանը կարող է այսօր հրեշտակ դառնալ: Մինչև նրա հրեշտակ դառնալը, թուրքիայում հայի անունը միայն մնացած կլինի»:

## ՈՒՇԱԳՐԱՎ ՄՏՔԵՐ

Երկրագնդի երեսին չկա այլ երկիր, որն այսքան հագեցած լինի հրաշքներով, ինչպես հայերի երկիրն է...

**ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆ**

Հայերը քրիստոնյա քաղաքակրթության հնագույն ժողովուրդներից են, աշխարհի ամենախաղաղասեր, նախաձեռնող և խոհեմամիտ ազգերից մեկը:

**ՖԻՆԵՐԻԿ ՇՈՂԵՆ**

«Ամեն ոք ազգին սիրով լոկ արբշիռ, ազգին ոգով հաղորդված, պիտի վառի, բորբոքի, որ թողգոմա տունն զգա, թե իր օջախը մարած այսօր հրաբուխ է դարձեր»:

**ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ**

Ձգացնել տուր թշնամիիդ, որ ամեն վայրկյան պատրաստ ես պատերազմելու, և նա կիրաժարվի զինու ուժով քեզ անհանգստացնելու մտքից:

**ԳՐԻԳՈՐ ՋՈՐՈՂ**

Ինձ համար դժվար է հավատալ, որ որևէ մեկը կարող է ծանոթանալ այս նշանավոր ժողովուրդի պատմությանը՝ առանց խորապես ցնցվելու հայերի մեծ ողբերգությունից:

**ՖԻՏՅՈՆ ՆԱՍՍԵՆ**

Հայաստանը քաղաքակրթության օրրան է, Հին աշխարհի առաջատար և զարգացած երկրներից մեկը:

**ՖԻՆԵՆ ՎԵՐՅԵԼ**

Հայ ժողովուրդը տարբերվում է կենսասիրությամբ, տոկունությամբ, սեփական ճշմարտության հանդեպ ունեցած վստահությամբ, կամքով: Հենց այս որակների շնորհիվ այն մշտապես հաղթանակած է դուրս գալիս ցանկացած փորձությունից:

Նրա պատմությունը ամենախորհրդավոր պատմությունն է բոլոր ժողովուրդների կյանքի մեջ:

**ԷՄԻԼ ՎԵՐՅԱՐՆ**

Հայաստանը ողջ մարդկության հոգևոր կյանքի կենտրոններից մեկն է: Այն արժանի է նույնքան ուշադրության, որքան և մյուս հիասքանչ ժողովուրդների պատմությունը, որոնք իրենց ուրույն ներդրումն են ունեցել մարդկության մշակույթում:

**ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՄՈՎ**

Մի ժողովուրդ, որն իրեն պետք եղած ուժն իրենից դուրս է փնտրում, կուրորեն իր պարտությունն ու անկումն է նախապատրաստում:

Թուրքերը Հայկական հարցում երբեք էլ չեն փոխվի, քաղաքակրթվի. նրանք մնում են նույնը, և նրանց հետ լեզու գտնելու քարոզչությունը վնասակար է, իսկ հաշտությունը՝ աղետաբեր...

**ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ**

Մեր հոգեկան սնունդը Արարատից է գալիս... Եվ իզուր չէ, որ հայ ժողովուրդը պատմության մեջ չտեսնված չարչարանք է կրել, միլիոնավոր զոհեր է տվել, ծով արյուն է թափել՝ այդ լեռը չկորցնելու համար:

**ԿՈՍՏԱՆ ՋՈՐՅԱՆ**

*Գիտություն*

**Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ**

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16 Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 26.03.2024 թ.:

**"ГИТУТЮН" ("Hayka") газета НАН РА**